

Վարդան Զ. Պետրոսյան
Բանաս. գիտ. թեկնածու

ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼՅԱՆ ՀԱՅԵՐԵՆԱԳԵՏՐ

Նշանավոր գրաքննադատի լեզվաբանական մտորումները*

Բանալի բառեր – հայերենի լեզվական բնույթը, պատմա-համեմատական հայերենագիտություն, հաբեթական ուսմունք, հայերենը «ասիանիկ» լեզու, «տեսություն ձույլ բաղաձայնների», հայերենի շեշտը, ստուգաբանություններ:

Նիկոլ Աղբալյանը հայ հանրությանն առավելապես հայտնի է իբրև Առաջին հանրապետության (1918–1920 թ.թ.) շրջանի կրթության նախարար, որի անվան հետ է կապվում **Հայաստանի համալսարանի** բացումը, և նշանավոր գրաքննադատ, ով գրական առաջին քայլերից մեծ ապագա է գուշակել Վ. Տերյանի ու Ե. Չարենցի համար: Նրա կարծիքը հեղինակավոր է եղել նաև «Վերնատան» իր բարեկամների շրջանում (Հ. Թումանյան, Լ. Շանթ, Ա. Իսահակյան, Դ. Դեմիրձյան և ուրիշներ): Բայց քչերին է հայտնի, որ Ն. Աղբալյանը ոչ միայն ականավոր ազգային-հեղափոխական գործիչ է ու գրաքննադատ, այլև հմուտ **հայերենագետ**:

Ինչպես իր ժամանակի նշանավոր հայագետներից շատերը (Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Լեո, Ն. Ադոնց, Գ. Ղափանցյան), Ն. Աղբալյանը ևս բազմատաղանդ էր, սակայն, ինչպես և մյուսների դեպքում, նրա տաղանդը առավելապես դրսևորվել է այն ոլորտներում, որոնք եղել են իր բուն կոչումը կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ ինչով նա ավելի տևականորեն է զբաղվել: Ն. Աղբալյանի դեպքում դրանք հատկապես երկուսն էին՝ գրաքննադատությունը (իր տերմինով՝ «գրադատությունը»)¹ և կրթական գործի կազմակերպումը, որն առհասարակ նրա՝ որպես ազգային գործչի

*Հոդվածն ընդունվել է տպագրության 29.07.2014:

¹ Ն. Աղբալյանի գրականագիտական և քննադատական երկերի պսակը, անշուշտ, «Սայաթ Նովայի հետ» ոչ մեծածավալ, բայց խիստ ինքնատիպ ուսումնասիրությունն է, որը, հիրավի, համարվում է սայաթնովագիտության բարձրարժեք նվաճումներից մեկը: Տես **Նիկոլ Աղբալյան**, Սայաթ Նովայի հետ, «Ամբողջական երկեր», հատ. II, Պէյրուիթ, 1966, էջ 17–196:

Զ (ԺԲ) քառի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

ՎԷՆ համահայկական հանդես

գործունեության անբաժան մասն էր: Իհարկե, վերջինը նույնպես ուղեկցվել է յուրօրինակ գրական գործունեությամբ (հմտ. «Մտածումներ Հ.Յ. Դաշնակցության մասին», «Մեր կանոնագիրը», «Մտածումներ ազգի և դավանանքի մասին», «Մի քանի մտքեր մշակույթի մասին» և այլն)², բայց և այնպես Նիկոլ Աղբալյանը խորապես դժգոհ է եղել ինքն իրենից, որ չի կարողացել ավելի շատ և ավելի լրջորեն զբաղվել սիրած գրական (պիտի հասկանալ՝ գրականագիտական, գրաքննադատական) աշխատանքով, որը համարել է իր բուն կոչումը³: Իհարկե, լեզվաբանական հարցերի նկատմամբ հետաքրքրությունը կարող էր լինել նաև աշխատանքային ընթացքով պայմանավորված անհրաժեշտություն, եթե նկատի ունենանք, որ տարագրության տարիներին Ն. Աղբալյանը Սփյուռքի կրթական գործի նշանավոր կազմակերպիչներից էր, այն խոշոր գիտուններից մեկը, ով Լ. Շանթի հետ միասին ստեղծեց և ղեկավարեց նրա ամենից նշանավոր կրթօջախը՝ «Համազգային» հայ մշակութային ընկերակցության ձեմարանը, և ինքն էլ եղավ դասավանդվող նյութի հիմնական ապահովողներից, այլ կերպ ասած՝ իր ժամանակի մեծ Ուսուցիչներից մեկը:

Աղբալյանի հայերենագիտական նկրտումների համար, սակայն, վերոհիշյալ հաստատումները չի կարելի սպառիչ համարել: Այդ առումով ավելի քան ինքնատիպ է իր իսկ հիմնավորումը. **որևէ ազգի գրականությունը, հատկապես նրա հին շրջանի գրականությունը ձիշտ հասկանալու համար պիտի ձանաչել այն լեզուն, որով ստեղծվել է այդ գրականությունը**⁴: Ուրեմն Ն. Աղբալյանի հայերենագիտական հետա-

2 Հիշյալ աշխատանքների մեջ առանձնատու է հատկապես «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցության» մասին խիստ ինքնատիպ գրքույկը, որում հեղինակը իրեն բնորոշ համապարփակ, խոր, պատկերավոր, բայց և ճշգրիտ բնութագրումներով իմաստավորում է 19-րդ դարավերջի և 20-ի սկզբների հայ ազատագրական պայքարի առաջատարի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության էությունը, որպես հավաքական կերպար ուրվագծում է իդեալ-դաշնակցականին, որի նախատիպը առանձին վերցրած որևէ անհատ չէ (չնայած Դաշնակցությունը առաքյալների ու «խոնարհ հերոսների» պակաս չի ունեցել), այլ նվիրյալների փաղանգն ամբողջությամբ. **դա այն բարձր չափանիշն է, որին ձգտել են շատերը, բայց չի հասել ոչ ոք**: Ճանաչողական մեծ արժեք են ներկայացնում նաև իր ժամանակի մի շարք ազգային գործիչների՝ Ս. Ջավադյանի, Ա. Ահարոնյանի, Ա. Շահխաթունու, գորավար Անդրանիկի, Քեռու (Արշակ Գավաֆյան) և ուրիշների մասին Ն. Աղբալյանի հրապարակումները, որոնցում հեղինակը հաճախ ոչ մեծ ծավալի մեջ՝ ընդամենը մի քանի էջի սահմաններում, կերտել է գաղափարի և գործի նվիրյալի առինքնող, բայց և մաթեմատիկական ճշգրտության հասնող կերպարներ՝ բացառիկ նրբությամբ ակնարկելով նաև նրանց խոցելի կողմերը: Աավածի դասական նմուշ կարող է համարվել, մասնավորապես, գորավար Անդրանիկի մահվան առիթով Կահիրեում ասված խոսքը. գնահատելով գորավարի գործը՝ որպես հայ ազատամարտի առասպելական հերոսի, Աղբալյանը, այդ չափազանց զգայուն պահին անգամ հավատարիմ մնալով իրեն, քաջություն է ունեցել պատմության առջև պատասխանատվության զգացումով ակնարկելու Անդրանիկի բնավորության թուլությունների մասին, բայց այնքան նրբանկատորեն, որ դրանից ոչ դույզն-ինչ նվազել է գորավարի անձի նկատմամբ համակրանքը, և ո՛չ էլ խաթարվել է նրա անգուգական կերպարը՝ որպես Հայոց ազատամարտի լեգենդ: Տե՛ս **Նիկոլ Աղբալեան**, Մտածումներ, «Ամբողջական երկեր», հատ. III, Պէյրուօ, 1967, էջ 330-334):

3 Տե՛ս **Նիկոլ Աղբալյան**, Ընտրանի (կազմեց և ծանոթագրեց Գառնիկ Անանյանը), Եր., 2005, էջ 5:

4 Տե՛ս **Նիկոլ Աղբալեան**, Պատմութիւն հայոց գրականութեան, «Ամբողջական երկեր», հատ. IV, Պէյրուօ, էջ 261: Հմտ. «Քանի որ գրականությունը լեզուական երևոյթ է, ուրեմն կրնանք ըսել թէ՛ ան ընկերային երևոյթ մըն է, որովհետև լեզուն ինքը ընկերային երևոյթ մըն է»: Հմտ. նաև՝ «Լեզուն լավ մը դիտելով ու քննելով, կրնանք գաղափար մը կազմել այդ լեզուն ստեղծող ազգին յուզական և իմացական կարողութեանց մասին: Այն պատճառով

քրքրությունները միանգամայն գործնական էին:

Դատելով հայերենագիտական հրապարակումների թվականներից՝ «լեզվագիտությունը» (իմա՝ լեզվաբանությունը) Ն. Աղբալյանի միաքր գրադեցրել է տարագրության շրջանում՝ 1920-ական թթ. սկսած: Այդ հրապարակումները հիմնականում լույս են տեսել «Հանդես ամսօրյա», «Հայրենիք», «Սիոն» պարբերականներում և «Բանասերի հուշագիրը» խորագրված պրակներում (1937-1938), որոնցից որոշ գործեր ավելի ուշ տեղ գտան հետմահու հրատարակված «Ամբողջական երկերի» IV հատորում (Բեյրութ, 1970), իսկ շատ ավելի ուշ՝ Երրորդ հանրապետության շրջանում՝ պրոֆ. Գ. Անանյանի կազմած «Ընտրանի»-ում⁵:

Ն. Աղբալյանի լեզվաբանական հետաքրքրությունները պատմահամեմատական հայերենագիտության շրջանակներում են: Դա միանգամայն օրինաչափ է, որովհետև նրան առավելապես հետաքրքրում են հայերենի ցեղակցության և ցեղակից լեզուների հետ առնչությունների բնույթի հարցերը: Տեսական (ընդհանուր) լեզվաբանության ձեռքբերումները նա կարևորում է որպես այդ հարցերի լուծման միջոց: Չսայած որ Ն. Աղբալյանը չունի լեզվաբանի համարում, բայցևայնպես նրա լեզվաբանական «մտածումները» գիտական են, ինչպես որ գիտական են նրա գրականագիտական ու գրաքննադատական դիտարկումները, ուստի և արժանի են ուշադրության: Նա ծանոթ էր պատմահամեմատական լեզվաբանության ձեռքբերումներին⁶, լավատեղյակ էր նաև իր ժամանակի հայերենագիտության բարձր նվաճումներին (Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Ն. Մառ, Ա. Այտընյան, Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան և ուրիշներ), հանգամանքներ, որոնք, գումարվելով Աղբալյանի բնատուր սուր մտքին, կշիռ և գիտական խորք են հաղորդել նրա լեզվաբանական դատողություններին:

Ն. Աղբալյանի հայերենագիտական ժառանգության մեջ ինչպես գիտական խորքով, այնպես էլ լուծումների ինքնատիպությամբ ուշադրության արժանի են հատկապես նրա ստուգաբանական փորձերը և «Դիտողություններ հայոց լեզվի մասին», «Հայոց լեզվի շեշտը», «Նորից

գրականության պատմության իբրև նախաբան, լեզուով պիտի գրադիմ»: Նույն տեղում, էջ 262: Պիտի նկատել, որ Ն. Աղբալյանի վերոհիշյալ դատողություններն աշխարհընկալման աղերսներ ունեն 19-րդ դարի առաջին կեսի գերմանացի խոշոր լեզվափիլիսոփա Վ. Ֆոն Հումբոլդտի հայտնի դրույթի հետ, ըստ որի՝ **ժողովրդի լեզուն նրա ոգու հայելին է**: Տե՛ս **Вильгельм фон Гумбольдт**, Характер языка и характер народа // **Вильгельм фон Гумбольдт**, Язык и философия культуры, М., «Прогрес», 1985, էջ 370-381: Որ Ն. Աղբալյանը ծանոթ է եղել նշանավոր գերմանացու լեզվաբանական հայացքներին, երևում է իր իսկ խոսքից: Հմտ. «Համեմատական քերականության արշալոյսին գերմանացի մի հանձարեղ գիտուն՝ Վ. Հումբոլտ խորհրդածելով «լեզու» կոչուած երևույթի մասին ընդհանրապէս՝ մի շարք խորիմաստ գաղափարներ արտայայտեց, որ բավարար չափով չըմբռնեցին լեզուախոյզները»: Նույն տեղում, էջ 139: Սակայն նրա երկերը հիմքեր չեն տալիս ասելու, որ այդ ծանոթությունն ունեցել է խորքային բնույթ: Պատկերացումների ընդհանրությունը կարող է լինել ինչպես աղեցության հետևանք, այնպես էլ ձևավորվել ինքնուրույնաբար, որի օրինակները նույնպես քիչ չեն գիտության պատմության մեջ:

5 Տե՛ս **Նիկոլ Աղբալյան**, Ընտրանի (կազմեց և ծանոթագրեց Գառնիկ Անանյանը), Եր., 2005: 6 Մինչև 1930-ական թթ. պատմահամեմատական հնդեվրոպաբանության նվաճումների ամփոփիչ աշխատություններն էին **Կ. Բրուզմանի** «Հնդեվրոպական լեզուների համառոտ քերականությունը» (երկրորդ հրատարակությունը՝ 1916 թ.) և **Ա. Մեյեի** «Հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության ներածությունը» (յոթերորդ հրատարակությունը՝ 1934 թ.), որոնց, ըստ ամենայնի, Ն. Աղբալյանը ծանոթ էր:

շեշտի մասին», «Տեսությունն ձույլ բաղաձայնների» հոդվածները: Ու թեպետ այս աշխատանքներում արծարծված մտքերն ու առաջարկները գնահատելու առումով երկրորդական չէ Ն.Աղբալյանի լեզվաբանական պատկերացումների նշանակությունը, բայց պետք չէ նաև գերազնահատել վերջիններիս դերը, քանզի խորքային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ **նշված աշխատանքներում առկա եզրահանգումները բխում են նյութի սեփական քննությունից և ոչ թե հարմարեցվում են կանխակալ տեսական պատկերացումներին:** Այս առումով պիտի ասել, որ նա հավատարիմ է մնացել իր կողմից բանաձևված սկզբունքին. «... տեսությունները գործիքներ են գիտունի ձեռքին և ոչ անառարկելի վճիռներ: Ամէն նիւթ իր գործիքն է պահանջում: Գիտունը պէտք է յարմարի նիւթին և ոչ նիւթը գիտունի տեսության»⁷.

Ստորև կփորձենք Ն. Աղբալյանի լեզվաբանական և բուն հայերենագիտական պատկերացումները ներկայացնել պայմանական բաժանումով, քանզի իրականում դրանք չեն կարող մեկը մյուսից անկախ ձևավորվել:

1. Լեզվաբանության բնագավառում Ն. Աղբալյանի տեսական պատկերացումները, ըստ ամենայնի, ձևավորվել են 20-րդ դարի 20-40-ական թվականներին, ինչը նկատելի է նրա «Հայոց լեզուն» խորագրով աշխատանքի մի շարք դատողություններից⁸: Ինչպես այս աշխատանքի «միտք բանի»-ի տեսանկյունից, այնպես էլ առհասարակ Աղբալյանի հայերենագիտական, ավելին՝ գիտական ժառանգության առումով, վերոհիշյալ դրույթից բացի, սկզբունքային նշանակություն ունեն նաև հետևյալ հաստատումները.

ա) «գիտության համար կուռքեր գոյություն չունեն և պետք չէ, որ ունենան: Ինչ որ համոզիչ է՝ ընդունելի է: Ճշմարտության չափանիշը իր համոզական կարողության մեջ է»⁹,

բ) հայերենի ուսումնասիրության գործում հնդեվրոպական լեզվաբանությունը մտել է փակուղի. «իր հունձքը մեծարժեք է, բայց մեր ընդարձակ անդաստանի մէկ եօթերորդն է հնձած»¹⁰,

գ) օտարազգի հնդեվրոպաբանների նպատակը չի եղել «մեր լեզուն հետազօտել իբրև ուրոյն մտային կառուցում, իբրև ուրոյն մտայնութեան և իրաշխարհի անդրադարձում». այդ գործն ինքներս պիտի անենք՝ օտար լեզուների նյութը դարձնելով միջոց հայերենի այս կամ այն երևույթը մեկնաբանելու համար»¹¹:

Այս դրույթներն արդյո՞ք ունեն բավարար գիտական հիմքեր: Առաջին կետն ընդհանրական ճշմարտություն է, և դրա դեմ առարկելն անիմաստ է: Նույնը չի կարելի ասել, սակայն, **բ** և **գ** կետերի վերաբերյալ: Բայց դրանք վիճարկելուց առաջ հարկ է ամենայն լրջությամբ հաշվի առնել

7 Նիկոլ Աղբալեան, Ամբողջական երկեր, հտ. IV, էջ 140:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 127-178:

9 Նիկոլ Աղբալյան, Ընտրանի, էջ 279:– Այստեղ և այսուհետ մենք պահպանում ենք աղբալյանական ուղղագրությունը, որը ոչ միշտ է համապատասխանում այժմ գործառու սկզբունքներին:

10 Նիկոլ Աղբալեան, Ամբողջական երկեր, հատ. IV էջ 133:

11 Նույն տեղում, էջ 139:

ինչպես Ն. Աղբալյանի կողմից ներկայացված փաստարկները, այնպես էլ այդ աշխատանքների գրության շրջանում առհասարակ լեզվաբանական գիտության մեջ ընթացող խմորումները, որոնց, ըստ ամենայնի, նա տեղյակ էր: Վերջին առումով ուշադրության արժանի են հետևյալ հանգամանքները.

1) 1920-ական թթ. սկսած՝ պատմահամեմատական լեզվաբանությունը որոշ տեղատվություն էր ապրում. մի կողմից՝ խեթա-լուվական լեզուների հ.-ե. բնույթի հաստատումը, իսկ մյուս կողմից՝ մի շարք հարցերի՝ երիտքերականական մեկնաբանությունների առնչությամբ հատկապես կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչների կողմից մերժողական կեցվածքի ձևավորումը, շատերի աչքում սասանել էին դասական հնդեվրոպաբանության դիրքերը, չնայած որ երիտքերականությունը դեռևս շարունակում էր մնալ հ.-ե. լեզվաբանության տիրապետող ուղղությունը: Նույնիսկ դասական հնդեվրոպաբանության այնպիսի հեղինակավոր դեմքերի ներկայությունը, ինչպիսիք էին Ա. Մեյեն և Հ. Պեդերսընը, որոնք իրենց գիտական գործունեության բարձունքի վրա էին, արգելք չէր, որ լեզվաբանների սոր սերնդի բազմաթիվ ներկայացուցիչներ հանդես գային մի շարք ավանդական պատկերացումներ վերանայելու առաջարկություններով:

2) Նույն շրջանում աճում էր հետաքրքրությունը լեզվի կառուցվածքային, համակարգային և տիպաբանական բնութագրերի նկատմամբ: Եվրոպական և ամերիկյան մի քանի նորաստեղծ լեզվաբանական կենտրոններ (Պրահայի, Կոպենհագենի, Յելի) առաջարկում են լեզվի տարածամանակյա քնությունը փոխարինել համաժամանակյա քնությամբ՝ լեզվական կառուցվածքի հորիզոնական խորքային նկարագրությունը համարելով լեզվի մասին գիտության իրական առաքելությունը: Տարածամանակյա (դիաքրոնիկ) առանցքի համեմատությամբ համաժամանակյա (սինքրոնիկ) առանցքով քնությունը կարևորելու գաղափարը Ֆ. դը Մոսյորի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացի» հիմնական դրույթներից էր, որն էլ, ըստ էության, կյանքի էին կոչում կառուցվածքային լեզվաբանության նորաստեղծ դպրոցները:

3) Նույն ժամանակահատվածում՝ խորհրդային պետության ձևավորման փուլում, Ն. Մառը հայտարարում է իր նոր լեզվաբանական տեսության մասին («Նոր ուսմունք լեզվի մասին», 1923 թ.), որը հավակնում էր հեղաշրջել լեզվի մասին գիտական պատկերացումները: Օգտվելով այդ տարիներին ԽՍՀՄ-ում առկա «հակաբուրժուական» արմատական տրամադրությունների արշավանքից, որը պարզապես ոչնչացնում էր «հին աշխարհին» առնչվող ամեն ինչ, Մառն իր ուսմունքը հռչակեց մարքսիստական և փորձեց վարչահրամայական մեթոդներով նրան օրենքի ուժ տալ: Մառի ուսմունքը հետևորդներ չունեցավ ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս: ԽՍՀՄ-ում բացահայտ կամ ոչ բացահայտ նրան ընդդիմացան ինչպես պատմահամեմատական լեզվաբանության, այնպես էլ լեզվաբանական այլ ուղղությունների ներկայացուցիչները: 1900-ականների սկզբներին Մառը առաջադրել էր իր, այսպես կոչված՝ **հաբեթական տեսությունը**, որի ոգով շարադրանքի փորձ էր նաև «Հին հայերենի քերա-

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Զ (ԺԲ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

ՎԷՆ համահայկական հանդես

կանությունը» (1903): Այս գրքի առաջաբանում քննադատական հայացքով գնահատելով հին հայերենի մինչ այդ եղած քերականությունները՝ որպես հայոց լեզվի ոգուն ոչ հարազատ գործեր, Ն. Մառը գրում էր. «Հայոց լեզվի իսկական քերականությունը («действительная грамматика») կարող է ստեղծվել միայն բուն հայկական նյութերի՝ իրենց ամբողջ ծավալով հնարավոր խորը ուսումնասիրության ճանապարհով: Եվ այստեղ տեղական հայկական միջավայրը, տվյալ դեպքում՝ լեզվաբանականը, պիտի լուսավորվի իր ներքին լույսով, և միայն այդ ժամանակ հայոց լեզվի համեմատական ուսումնասիրությունը՝ կապված այս կամ այն լեզվի հետ, թեպետև, անկասկած, նրա հետ ցեղակից, կղաղարի հիշեցնել **ձամփորդություն խավարի միջով («хождение в потьмахъ»)**»¹²:

Հայերենագիտական, լայն առումով՝ լեզվաբանական խնդիրները Ն. Աղբալյանի միտքը զբաղեցրել են այդ նույն շրջանում, և բնական է, որ նրա նման լրջմիտ մտածողը, որը խորապես գիտակցել է իր խոսքի արժեքը, չէր կարող հայերենի տարբեր խնդիրների քննությանը ձեռնամուխ լինել՝ առանց վերոհիշյալ հանգամանքները հաշվի առնելու: Իհարկե, Ն. Աղբալյանը հարկադրված չէր հետևելու որևէ ուսմունքի, այդ թվում՝ Ն. Մառի, բայց ակնհայտ է, որ նա մեծ նշանակություն է տվել Մառի գաղափարներին¹³: Ավելին, Ն. Աղբալյանը ոչ միայն բարձր կարծիք ուներ Մառ լեզվաբանի մասին առհասարակ, այլև գտել էր նրա անմշակ գաղափարների սեփական «արդարացումը». «Պէտք է ասել, որ հետամուտ իր բեղուն մտքի թռիչքներին՝ Ն. Մառ ժամանակ չունեցաւ լուսալէս հիմնավորելու իր նոր և առողջ տեսութիւնները», - գրել է նա¹⁴: Ուստի ըստ Աղբալյանի՝ «պէտք է մեծ տեղ տալ հետազոտութեան այն եղանակին, որին Ն. Մառ անուանում է հնարանական (իմա՝ հնէաբանական-Վ. Պ.) վերլուծութիւն»¹⁵:

Այդ շրջանում Խորհրդային Հայաստանում ևս, ինչպես ողջ ԽՍՀՄ-ում, տիրապետողը Ն. Մառի «նոր ուսմունքն» էր, իսկ պատմահամեմատական լեզվաբանությունը, որի ամենից ակնառու ներկայացուցիչը հայ իրականության մեջ Հ. Աճառյանն էր, քշված էր անկյուն: Մյուս նշանավոր հայ լեզվաբանը՝ Գ. Ղափանցյանը, որը Մառին աշակերտել էր Ս. Պետերբուրգում, հայերենի բնույթի հարցում յուրօրինակ միջին դիրք էր գրավել երկու՝ հնդեվրոպական և «հարեթական» տեսությունների միջև՝ մի կողմից հայերենը համարելով երկշերտ (երկբնույթ) լեզու՝ բաղկացած հնդեվրոպական և ասիական շերտերից՝ «ասիական լեզվաբանական ենթաշերտի գերակշռությամբ»¹⁶, մյուս կողմից գրելով, որ «Հայերենը ունի **ուժեղ չափով շեշտված հնդեվրոպական նկարագիր** (ընդգծ. մերն է-Վ. Պ.), որը նստել է տեղական փոքրասիական (ասիանիկ) լեզուների

12 Н. Марръ, Грамматика древнеармянского языка, СПб., 1903, էջ XXXII:

13 Հմմտ. «Այս տեսութիւնը լայն հորիզոն է բացում մեր լեզուի հետազոտութեան առջև և թելադրում է մեր չմեկնուած բառագանձի և ձևերի մեկնութեան բանալին որոնել յարեթական կոչուած լեզուների հետազոտութեան մէջ» (տես **Նիկոլ Աղբալեան**, Ամբողջական երկեր, հատ. IV, էջ 138):

14 Նույն տեղում, էջ 137:

15 Նույն տեղում, էջ 142:

16 Г. А. Капанцян, К происхождению армянского языка // Историко-лингвистические работы, Е., 1975, էջ 222:

վրա, այդպիսով կազմելով մի յուրատեսակ խաչավորված նոր լեզու»¹⁷:

Արժանին մատուցելով ինչպես **հնդեվրոպական հայերենագիտությանը**, այնպես էլ **մատական «հարեթականությանը»**, հայերենի լեզվական բնույթի հարցում Ն. Աղբալյանի պատկերացումն ավելի մոտ էր հենց Գ. Ղափանցյանի տեսակետին, չնայած այս մասին նա բացորոշ չի խոսել¹⁸: Մտքի լեզվաբանական ուսմունքում Ն. Աղբալյանը մերժում էր, մասնավորապես, **խաչավորման տեսությունը**, որին Մատը անկյունաքարային նշանակություն է տվել՝ այդպիսին համարելով գոյություն ունեցող բոլոր լեզուները, այդ թվում՝ հայերենը¹⁹: Լեզվական խաչավորման մասին Ն. Մատի տեսակետի ավելի հստակ գնահատականը Աղբալյանը տվել է պատմահամեմատական լեզվաբանության մեջ ընդունված սկզբունքի առնչությամբ. «Այս տեսակետը (իմա՝ լեզվական փոխազդեցությունների մասին պատմահամեմատական լեզվաբանության մեկնությունը՝ Վ. Պ.) լիովին տարբեր է այն տեսակետից լեզուական պատուաստ երևոյթների մասին, որ **չարաչար օգտագործում է Ն. Մատ** մեկնելու համար տարբեր լեզուների բառամթերքը»²⁰ (ընդգծումը մերն է՝ Վ. Պ.):

Առ այդ՝ Ն. Աղբալյանն ընդունում է հ.-ե. լեզվաբանության դերը հայերենի գիտական ուսումնասիրության գործում, սակայն կարծում է, որ հայերենագիտության հետագա զարգացման առումով այն նոր հեռանկարներ չի խոստանում: Ըստ Հ. Աճառյանի հաշվումների՝ «Wald-Pokorny»-ի երկհատոր բառարանում հնդեվրոպական նախալեզվի համար վերականգնված 2223 բառարմատներից հայերենը պահպանել է միայն 909-ը, իսկ ավելի խիստ հաշվարկի դեպքում (եթե դուրս թողնվեն երկրորդական ածանցումով կազմվածները)՝ 713-ը²¹: Հայերենի շուրջ 11000 բառարմատներից փոխառությունները առանձնացնելու դեպքում, ըստ Աղբալյանի հաշվումների, կմնա շուրջ 6481 բառ, որոնցից իբրև բնիկ հնդեվրոպական, ստուգաբանված են միայն 909 (713)-ը, այսինքն՝ մոտ մեկ յոթերորդը²²: Սյուների ծագումը պատմահամեմատական հայերե-

17 Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, եր., 1961, էջ 11-12:

18 Հմմտ. «... հայերէնը կարող ենք համարել մի ասիանիկ լեզու, որ հնդեվրոպական է, բայց ոչ այն իմաստով, որ կարծում էր Ն. Մատ, այսինքն բնաբոյս աճումով, այլ հնդեվրոպական հայերէնի զօրաւոր ազդեցութեան ենթարկուելով և իր բառամթերքը մեծ մասամբ նրա կաղապարների մէջ ձուլելով» (տե՛ս Ն. Աղբալյան, նույն տեղում, էջ 152): Կարևոր է նկատել, որ «ասիանիկ» լեզուների թվում Գ. Ղափանցյանը նկատի ուներ նաև խեթա-լուվական լեզուները: Իրողությունն այն է, որ այդ լեզուների հ.-ե. բնույթը արդեն իսկ հաստատվել էր չեխ լեզվաբան Բ. Հռոզնու կողմից դեռևս 1915-1917 թթ. կատարված ուսումնասիրությունների արդյունքում, բայց այդ դրույթը գիտական լայն շրջանառության մեջ մտավ միայն 1940-ականներից սկսած: Հետևաբար լիովին հասկանալի է, երբ Ն. Աղբալյանի «Իտողություններում» խեթա-լուվական լեզուները նկատի են առնված «ասիանիկ» բնորոշումով և ոչ թե՛ «հնդեվրոպական»:

19 Հմմտ. «...հայոց լեզուն այժմ էլ չպարզաբանված հանելուկ է գիտնականների համար: Մի բան երևում է ակնհայտ. այն **խառն լեզվի (мѣшанного языка)** խիստ բնութագրական օրինակ է» (տե՛ս Խ. Մարրե, նույն տեղում, էջ XXXI):

20 Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հատ. IV, էջ 150:

21 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Յերևան, 1940, էջ 33 և հաջորդները:

22 Հնարավոր թյուրըմբռնումը կանխելու համար նշենք, որ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» ստուգաբանված բառերի թիվն է 5062, որից 1604-ը ստուգաբանել է հեղինակը: Մեր օրերում ստուգաբանված հայերեն բառերի թիվը զգալիորեն անել է, սակայն ստույգ թվերի լեզվով (ինչպես որ դա առկա է Հ. Աճառյանի մոտ) խոսել առայժմ հնարավոր չէ այդպիսի ամփոփիչ ուսումնասիրության բացակայության պատճառով: Հայերե-

նագիտությունը չի բացատրում: Ստուգաբանվածների մեջ բացակայում են կենսական անհրաժեշտության իրերի ու երևույթների բազմաթիվ անվանումներ, որոնց համար հայերենը գործածում է մեծ թվով փոխառյալ բառեր տարբեր լեզուներից և հատկապես պարսկերենից: Ընդ որում, կան ամբողջ ոլորտներ, ուր որոշ իրերի ու երևույթների անվանումներ բնիկ են, այսինքն՝ ժառանգված հ.-ե. լեզվից, ինչպես **կոզի** «կարագ», **կաթ**, **թան**, **կորկոտ**, **այլուր**, **աղորիք**, բայց որոշներն էլ փոխառություն են, ինչպես **կթելը**, **ցորենը** և այլն: «Իսկ որ ամենից զարմանալին է, այդ խաշնարած ժողովուրդը (ինա՛ հայ ժողովուրդը-Վ. Պ.) ունի **գիր** և **ընթեռնուլ** բառերը. այդպես են նաև **նաւ** և **լաստ** բառերը, որ թուրք է թէ պէտք չէ որ լինէին խաշնարածի լեզուի մէջ: Ակամա հարց է ծագում թէ ինչից էին կորկոտ պատրաստում երբ ցորէն չունէին և ինչի վրայ էին գրում կամ ինչ էին կարդում երբ հովիւ էին»²³: Ն. Աղբալյանը ներկայացնում է այսօրինակ բառերի զգալիորեն մեծ ցանկ:

Իրանական փոխառություններն, ըստ Աղբալյանի, գերազանցապես պարթևական գերիշխանության արտահայտություններ են մեր լեզվում, որոնք դուրս են մղել համապատասխան բնիկ հայերեն բառերը: Այդ բառերից որոշները պահպանել են մեր բարբառները, բայց պահպանվածների թիվը չափազանց փոքր է անհետ կորածների համեմատությամբ: Հնդեվրոպական առնչությունների հիմքի վրա չբացատրվող իրողություններ կան նաև հայերենի հնչույթաբանության մեջ (օր.՝ ձ (j), ծ(Č), ց(C'), ջ(j), ձ(Č), չ(Č') հպաշփականները չունեն եվրոպական տարածքի հ.-ե. լեզուները, դրանք չեն վերականգնվում նաև հ.-ե. նախալեզվի համար) և քերականության մեջ (օր.՝ երկակի թվի և քերականական սեռի ձևեր տարբերակում է հ.-ե. հին լեզուների մեծ մասը՝ և՛ արևմտյան, և՛ արևելյան տարածքի, բայց չունի գրաբարյան հայերենը, և հիմքեր չկան ասելու, թե, որպես համակարգային երևույթ, ունեցել է նախագրաբարյանը, չնայած ոմանք երկակի թվի մնացուկներ են համարում հին հայերենի **աչուի**, **ոտուի**, **ձեռուի** բառաձևերը): Այսօրինակ իրողությունները, ըստ Աղբալյանի, առաջացնում են այն բնական հարցը, «...թէ արդեօք մեր լեզուն հնդեվրոպական ծագու՞մ ունի, թէ մի տարբեր լեզու է, որ զգեցած է հնդեվրոպական հանդերձանք, սեփականելով հնդեվրոպական մի որոշ բառամթերք և բառաձևեր»²⁴:

Ըստ էության, Ն. Մառի հնէաբանական մեթոդը, որքան էլ այն նոր գաղափարներ էր առաջարկում, տեսական դատողություններից այն կողմ չէր անցնում, հետևաբար նույնպես հուսալի հենարան չէր հայերենի չստուգաբանված բառազանձը մեկնելու համար: Այս առումով ամենից հավասարակշռված մոտեցումը միջին ճանապարհն է, այն է՝ Գ.

րենի բառապաշարի ստուգաբանությունների բնագավառում վերջին խոսքը Գ. Ջահուկյանի՝ հետմահու հրատարակված «Հայերեն ստուգաբանական բառարան» է (2010 թ.), բայց այն նույնպես այդպիսի հնարավորություն չի ընձեռում, որովհետև հեղինակը չհասցրեց իր աշխատանքի արդյունքներն ամբողջացնել: Սակայն, դատելով այլ տվյալներից, մեր օրերում հայերենի ստուգաբանված բառերի թիվը շուրջ 6500 է, այդ թվում՝ շուրջ 1500-ը համարվում են բնիկ հնդեվրոպական (տես **Գ. Բ. Ջահուկյան**, Ջրույցներ հայոց լեզվի մասին, Եր., 1992, էջ 64):

23 **Ն. Աղբալյան**, նույն տեղում, էջ 151:

24 **Նիկոլ Աղբալյան**, նույն տեղում, էջ 152:

Ն. Աղբալյանի ժամանակից ի վեր ինչպես առհասարակ հնդեվրոպական լեզվաբանությունը, այնպես էլ պատմահամեմատական հայերենագիտությունը մեծ առաջընթաց է արձանագրել, սակայն, դրանով հանդերձ, չենք կարող ասել, թե մինչև նախորդ դարի կեսերը հայերենագիտության առջև ծառայած բոլոր հարցերի պատասխանները տրվել են: Իհարկե, չնայած առկա հարցականներին, այսօր էլ կասկածից վեր պիտի համարել մեծատաղանդ գերմանացու՝ Հ. Հյուբշմանի դրույթը առ այն, որ **հայերենը հ.-ե. լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղերից մեկն է:** Այս հիմնադրույթը, սակայն, ելնում է հայերենի գրաբարյան վիճակից և դեռևս չի լուծում նրա նախագրաբարյան ենթաշերտային (սուբստրատային) և մակաշերտային (սուպերստրատային) առնչությունների խնդիրը: Մասնավաճառ պիտի հաշվի առնել, որ Հյուբշմանի ժամանակներում և հատկապես նրա հանրահայտ հոդվածի («Հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների շարքում», 1875) գրության ժամանակ դեռևս խոսք չկար խեթերենի (առհասարակ խեթա-լուվական լեզուների), ինչպես նաև հետագայում հ.-ե. ճանաչված այլ լեզուների ծագումնաբանական բնույթի մասին:

Եվ ընդհանրապես՝ պատմահամեմատական հնդեվրոպաբանությունը գտնվում էր բուռն որոնումների և ձևավորման փուլում՝ կրելով երիտքերականական պատկերացումների ուժեղ կնիքը: 20-րդ դարի երկրորդ կեսի հայերենագիտությունը, հատկապես ի դեմս Գ. Զահուկյանի աշխատությունների³⁰, հիմք ընդունելով ժամանակակից լեզվաբանության տեսական և մեթոդական նվաճումները, ընթացել է հայերենի հ.-ե. նկարագրի մասին վկայող լրացուցիչ փաստարկների ձեռքբերման ճանապարհով: Ու չնայած զգալի հաջողություններին՝ ոչ բոլոր հարցականներն են հանված: Մասնավորապես, հնդեվրոպական նախալեզվից մինչև գրաբարյան հայերեն շուրջ 3000 տարվա նախագրային վիճակի մասին, գրության չգոյության պատճառով, պատկերացումներն ընդհանուր առմամբ վարկածային բնույթ ունեն և ոչ միշտ են համոզիչ: **Հետևաբար՝ հայերենի նախասկզբնական պատմության մեջ, հնդեվրոպականից բացի, նաև ծագումնաբանական այլ շերտեր փնտրող գիտնականների՝ Ն. Մառի, Գ. Ղափանցյանի, ինչու ոչ՝ Ն. Աղբալյանի հարցադրումների առնվազն մի մասը այսօր էլ կարող են արդիական համարվել:**

II. Եթե լեզվաբանության տեսության հարցերում Ն. Աղբալյանն ընդհանուր առմամբ գոյություն ունեցող մոտեցումները քննողի և գնահատողի դերում էր, ապա որոշակի լեզվական իրողություններ քննելիս նա լիովին ինքնուրույն էր և ինքնատիպ: Ուստի երկրորդ կարգի աշխատանքներն ավելի շատ են ուշադրության արժանի: Ինչպես արդեն նշվել է, այդ կարգի աշխատանքների մեջ առանձնանում են, մասնավորապես, նրա ստուգաբանական դիտարկումները և հնչյունաբանական որոշ իրողությունների վերաբերյալ տեսակետները:

30 Տե՛ս Գ. Բ. **Джаукян**, Урартский и индоевропейские языки, Е., 1963, - Գ. Բ. **Джаукян**, Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967, - Գ. Բ. **Զահուկյան**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, - Գ. Բ. **Джаукян**, Сравнительная грамматика армянского языка, Е., 1982, - Գ. Բ. **Զահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:

Ն. Աղբալյանի հնչյունաբանական և ստուգաբանական քննություններում առանցքային դեր էր վերապահված հին հայերենի բառային շեշտի բնույթին³¹: Բառային շեշտին առհասարակ մեծ նշանակություն է տրվել լեզվաբանական գրականության մեջ: Լեզվաբանները բառային շեշտի բնույթով և տեղաշարժերով են բացատրում հնչյունափոխական գրեթե բոլոր երևույթները, որոնցից շատերը, հարյուրամյակների և հազարամյակների ընթացքում փոխհաջորդելով միմյանց կամ պատկերավոր ասած՝ շերտ-շերտ նստելով մեկը մյուսի վրա, բառի ժամանակակից պատկերը անձանաչելիության աստիճան հեռացրել են ելակետային (նախասկզբնական) վիճակից: Որպես կանոն՝ հնչաբառի կրած փոփոխություններին գումարվել են իմաստային փոփոխությունները՝ հաճախ հանգեցնելով ստուգաբանական իսկական գլուխկոտրուկների:

Հին հայերենի բառային շեշտի վերաբերյալ հայերենագետների կարծիքները զգալիորեն տարբեր են: Ըստ Ա. Մեյերի՝ նախագրային հայերենի բառային շեշտը եղել է վերջընթեր և բավականին գորեղ (այսինքն՝ ուժգնությամբ): Շեշտի վերջընթեր դիրքի պատճառով. ա) վերջին ձայնավորն ընկել է և քույր լեզուների համեմատ հայերենի բառը մեկ վանկով կրճատվել է (հմմտ. սնսկ. páñca, հուն. ᾠένθε, հյ. հինգ), բ) նախորդող վանկի ի, ու ձայնավորները և ոյ, եա երկբարբառները սեռականի կազմության մեջ ենթարկվել են հնչյունափոխության (հմմտ. սիրտ >ս(ը)րտի, պատի >պատուոյ (ի//օ), ցուլ >ց(ը)լոյ, անձուկ («նեղ, սակալ, ծանր») >անձկոյ (ու//օ), լոյս >լուոյ, սէր (<*սէյր) >սիրոյ, առաքեալ >առաքելոյ): Պատմական (իմա՝ գրաբարյան) շրջանում շեշտը, ընկնելով վերջին վանկի վրա, զգալիորեն թուլացել է³²:

Ուստի Հ. Պեղերսընը հին հայերենի բառային շեշտին (ենթադրաբար՝ ինչպես գրային փուլի սկզբում, այնպես էլ նրան նախորդող շրջանի զգալիորեն տևական ժամանակահատվածում) վերագրել է երաժշտական բնույթ³³: Ն. Մանի կարծիքով ևս հին հայերենի բառային շեշտը եղել է վերջընթեր³⁴: Ընդ որում, հին հայերեն ասելով՝ նա նույնպես հասկանում է նախագրաբարյան փուլը³⁵: Բառի վերջին վանկը գտնվելով թույլ դիրքում՝ նրա ձայնավորը փոխվել է ը-ի կամ սղվել է: Նախավերջին վանկի շեշտադրությունը «մթագնած չի եղել դեռևս հին գրային հայերենում, ավելին՝ հայերենի շեշտի այդ հիմնական դրությամբ են բացատրվում հին հայերենի քերականության առավել բնութագրական երևույթները»³⁶:

31 Հմմտ. «Լեզուների շեշտադրությունը հիմնական երևույթ է» (տես Ն. Աղբալյան, Ընտրանի, էջ 262):

32 Տես A.Meillet, Esquisse d'une grammaire comparée de L'arménien classique, Vienne, 1936, p. 19-20:

33 Տես Հովգեր Պեղերսըն, Հին հայերէն լեզուի շեշտը // նույնի՝ Նպաստ մը հայ. լեզուի պատմութեան, Վիեննա, 1904, էջ 68-74: -Տես նաև՝ Վարդան Պետրոսյան, Հայերենագիտության երկու հիմնահարց ըստ Հովգեր Պեղերսընի, «Բանբեր Երևանի համալսարանի: Բանասիրություն», N 141.2, 2013, էջ 38-53:

34 Հմմտ. «Շեշտը հին հայերենում դրվում է բառի՝ վերջից երկրորդ վանկի վրա» (տես H. Mappes, նույն տեղում, էջ 34):

35 Հմմտ. «Հասկանալի է՝ վերջից երկրորդ վանկ կամ նախավերջին վանկ ասելով պիտի պատկերացնել բառի նախասկզբնական տեսքը» (տես նույն տեղում, էջ 35):

36 Նույն տեղում:

Ուշագրավ է, որ նախագրային հայերենի շեշտադրության հարցում Մեյեի և Մառի պատկերացումները համընկնում են³⁷: Այդ համընկնումը, սակայն, լիակատար չէ. ա) Մառը վերջընթեր շեշտի հետքեր է տեսնում նաև գրաբարյան հայերենի քերականական իրողություններում. Մեյեն նման դիտարկում չունի, բ) Մառի կարծիքով նույնպես նախագրային հայերենում բառը ավարտվել է որևէ ձայնավորով կամ վերջին բաղաձայնից առաջ ունեցել է որևէ ձայնավոր՝ **ա, ի, ե, ո, ու** (հմմտ. կարգ**ա**, ախտ**ի**, մարդ**ո**, մոզ**ու**, եզ**ան**, մուկ**ան**, գառ**ան**), որն էլ հենց տվյալ բառի բնի ձայնավորն է: Սակայն Մառը հավելում է, որ, գտնվելով շեշտագուրկ դիրքում, այդ ձայնավորը թուլացել է՝ վերածվելով **ը**-ի, ուստի դասական հայերենում՝ գրաբարում, վերոհիշյալ բառերը հնչել են **կարգը, ախտը, մարդը, մոզը, եզրն, մուկրն, գառրն** և ոչ թե՛ **կարգ, ախտ, մարդ, մոզ, եզ, մուկ, գառ**, ինչպես հնչում են աշխարհաբարում: Ըստ Մառի՝ հին հայերենի բառավերջի թուլացած՝ **ը**-ի վերածված ձայնավորները վերականգնվում են վրացերենի կատարած փոխառություններում. վրացերենը, չունենալով **ը** հնչյունը, հայերեն բառերը փոխառել է անհնչյունափոխ ձևերով³⁸:

Ն. Մառի այս երկու դրույթներն էլ որդեգրում է Ն. Աղբալյանը և յուրովի զարգացնում «Հայոց լեզվի շեշտը» և «Նորից շեշտի մասին» հոդվածներում³⁹: Աղբալյանը Մառի տեսության մեջ «ամենից արժեքավորը» համարում է «բառավերջի ձայնավորի ըթացումը (**ը** դառնալը)⁴⁰»: Այս դրույթը հնարավոր է դարձնում բացատրել նախագրային հայերենի բառի ինչպես կառուցվածքը, այնպես էլ շեշտադրությունը: Ըստ Աղբալյանի՝ «մեր բառերը հնագույն շրջանում ավելի երկար էին և վերջանում էին ձայնավորով»⁴¹: Դրա ապացույցը վրացական փոխառություններում լրացուցիչ ձայնավորի առկայությունն է հայերենում պահպանված ձևի համեմատությամբ. հմմտ. **մոզու, չուլօ, ծեբօ, քուրիմա, կալօ, ծալիկա, ավազակի, ճճմարիտի** և այլն: Դրանք նշված բառերի սեռական հոլովաձևերն են: Այս առնչությամբ Աղբալյանը զարգացնում է մի շատ կարևոր միտք, այն է՝ նախագրային հայերենում «**սեռական հոլովը ուղղական է՝ շեշտը փոխած**»: **-ո**-ով և **-ա**-ով ավարտվող բառերը «հին ժամանակ արտասանված են եղել «**մո՛զու, շի՛ւղոյ, ծե՛փոյ, *քու՛րիմայ, կալոյ, *ծա՛ղիկայ**»»: Սեռականում շեշտը տեղաշարժվում էր աջ և ամփոփված կամ «սուղ» **ը**-ի վերածված ձայնավորները «շեշտի հարվածից» կրկին արթնանում էին գրաբարում՝ ընդունելով **մոզու՛, ծեփո՛, քրմա՛նց, կալո՛, ծաղկա՛նց, ավազակի՛, ճճմարիտի՛**

37 Նման դեպքերում սովորաբար ենթադրվում է, որ նրանցից մեկը հետևում է մյուսին կամ երկուսն էլ հետևում են երրորդ անձի տեսակետին: Այս դեպքում առաջին տարբերակը գրեթե հավանական չէ, քանի որ թե՛ Ա. Մեյեի և թե՛ Ն. Մառի համապատասխան քերականությունները լույս են տեսել միևնույն տարում՝ 1903-ին, իսկ նրանցից առաջ հայերենի բառային շեշտի մասին նման տեսակետ չի արտահայտել որևէ հայերենագետ: Հետևաբար մնում է երրորդ տարբերակը՝ այդ տեսակետին նրանք հանգել են ինքնուրույնաբար: Ավաճոր հավանական է թվում նաև այն պատճառով, որ մանրամասների մեջ նրանց մոտեցումներն, այնուամենայնիվ, հեռանում են:

38 Տե՛ս **Н. Марр**, նույն տեղում, էջ 46-47:

39 Տե՛ս **Նիկոլ Աղբալյան**, Ընտրանի, էջ 257-277:

40 Նույն տեղում, էջ 269:

41 Նույն տեղում, էջ 270:

տեսքը⁴²: Այս տեսությամբ, ըստ էության, Ն. Աղբալյանը նախագրային հայերենին վերագրում է *շարժական շեշտի* հատկանիշ, որովհետև նոր քերականական ձևի՝ հոլովաձևի կազմությունը, համաձայն այդ տեսության, ոչ թե պարզապես ուղեկցվում է շեշտի տեղաշարժով դեպի ավելացած վանկը (կայուն-շարժական շեշտ), այլ իր հիմնական տեղից՝ նախավերջին վանկից, անցնում է վերջինին՝ իրականացնելով իմաստատարբերակիչ գործառույթ:

Շարժական շեշտ ունեցող ժամանակակից լեզուներում, օր.՝ ռուսերենում, շեշտի տեղաշարժը կարող է ինչպես ուղեկցվել հնչյունական կազմի փոփոխությամբ (հմմտ. *Молодежь* [мoлад'joж'] «երիտասարդություն», բայց *молоде'ть* [мoладeт'] , *горы'* [гoры] «լեռան», բայց *го'ры* [гoры] «լեռներ»), այնպես էլ՝ չուղեկցվել (հմմտ. *ру'ки* [pyки] «ձեռքի»–*руки'* [pyки] «ձեռքեր»): Այս հատկանիշը բնորոշ եղել է նախագրային հայերենի բառային շեշտին, թե՛ ոչ, ցանկացած պատասխան կարող է ունենալ հավանականության շատ փոքր աստիճան միայն:

Գրաբարի բառային շեշտը կայուն-շարժական է (ինչպես և ժամանակակից հայերենում), որովհետև նա պարզապես անցնում է ավելացած վերջին վանկին՝ առանց իմաստային տեղաշարժեր առաջացնելու:

Մեյեն, վկայակոչելով գրաբարյան **հաւատամ** բառի՝ «միջնադարյան կիլիկյան հայերենում» **ա՛ւդամ** (*ävdam*), **վա՛ճառականեար**-ի (**վաճառական** բառի հոգնակին)՝ **վա՛ճոզներ** (*vājgnér*) դառնալու օրինակները, գրաբարյան փուլի համար ենթադրել է բազմավանկ բառի երկու շեշտով դրվածք (վիճակն այդպես է նաև աշխարհաբարում), որոնցից գլխավորը դրվել է վերջին (նախագրային վերջընթեր), իսկ երկրորդականը՝ առաջին վանկի վրա՝ **հա՛ւտամ**: Ըստ այդմ՝ միջին վանկերի **ա**-երը սղվել են թույլ դիրքի պատճառով⁴³: Ըստ Աղբալյանի՝ այդ դրվածքը հայերենի բառն ունեցել է նաև նախագրային փուլում (հմմտ. «երկրորդական շեշտը գործած է և նախագրական շրջանում»⁴⁴): Ավելին, նախագրային հայերենի բայը սահմանական ներկայի երրորդ դեմքում ունեցել է **-տ** թեքույթը (հմմտ. գործե-մ, գործե-ս, *գործե-(տ) (գրբ. գործէ) , գործե-մք, գործե-ք, *գործե-ն(տ)), որը ընկել է թույլ դիրքի պատճառով, ինչպես որ արդի ֆրանսերենում այն գրվում է ավանդույթով, բայց չի կարդացվում (հմմտ. *il dit* [di] «նա ասում է»): «թմրած» **t**-ն ֆրանսերենում արթնանում է հնչաշղթայում՝ ձայնավորից առաջ դիրքում՝ *il dit a moi* [il di ta mwa] «նա ասում է ինձ»:

Հայերենագիտության մեջ իշխող տեսակետի համաձայն՝ գրաբարի բայի սահմ. ներկայի եզ. 3-րդ դեմքի **-է** վեջավորությունը ծագում է *h.-ե. *ey* (*-եյ)-ից և արտաբերությամբ համարժեք է եղել [եյ]-ի: Այս տեսակետի համաձայն՝ հայերենի բայը նախագրաբարյան փուլում նշված դիրքում բնի ձայնավորից հետո ունեցել է **-յ**, որը պահպանել են միայն **ա** և **ո** լծորդության բայերը (հմմտ. խաղ-**ա-յ**, մն-**ա-յ**, գ-**ո-յ**), որովհետև հին

42 Տե՛ս նույն տեղում, էջ 269-270:

43 Տե՛ս **A.Meillet**, *Esquisse...*, էջ 20:– Ն. Աղբալյանն այստեղ որոշ տարբերություններ ունի: Մասնավորապես՝ Մեյեի «Ակնարկ...»-ում («Esquisse...») խոսքը **կիլիկյան հայերենի** մասին է և ոչ թե՛ «արևմտյան բարբառների», ինչպես ներկայացնում է Ն. Աղբալյանը:

44 **Նիկոլ Աղբալյան**, Ընտրանի, էջ 261:

հայերենում բառը չէր կարող ավարտվել **ա** և **ո** ձայնավորներով, բացառությամբ որոշ դեպքերի⁴⁵: Այս տեսակետին չէր կարող ծանոթ չլինել Ն. Աղբալյանը:

Ն. Աղբալյանի տեսակետի հիմքում **հ.-ե.** խոնարհման համակարգն է, այն տարբերությամբ, որ սահմ. ներկյան երրորդ դեմքում ունեւր **-ti** (եզ.թ.)/**-nti** (հզն. թ.) թերթյթները՝ «առաջնային վերջավորությունները» (հմնտ. հն հնդկ. *as-ti* «կա»/*sa-nti* «կան», հն հուն. *έσ-τί/έν-τί*, լատ. *es-t/su-nt*, գոթ. *is-t/si-nd*⁴⁶, լիտվ. *ēs-ti/ ēs-ti*, հն սլավ. *ѣс-тъ/сѣ-тъ*), իսկ **-t** (եզ.թ.)/**-n(t)** (հզն. թ.) թերթյթները՝ «երկրորդային վերջավորությունները», բնորոշ էին աորիստին: Եթե **հ.-ե.** նախակերպ-հայերեն կապը ակնհայտ է անբուն բայերի ներկայի եզ. թ. 1-ին և 2-րդ դեմքերի վերջավորությունների միջև (հմնտ. **es-«լինել» - *es-mi>hj. ե-մ, *es-si>hj ե-ս*, ապա 3-րդ դեմքում ենթադրվում է միջանկյալ անցում **es-ti>hj է(<*է)*, ապա բնավոր բայերի դեպքում այդ համապատասխանությունն առկա է 2-րդ և 3-րդ դեմքերի ձևերի միջև (հմնտ. **bher- «բերել» - *bher- e-si>hj. բերե-ս «բերում ես», *bher-e-ti> բեր-է(<*է)* «բերում է»), իսկ 1-ին դեմքը ունեցել է **ō* վերջը (հմնտ. **bher-ō «բերում եմ»*) հուն. *φέρ-ω «բերում եմ»,* հն. սլավ. *берѣ [berǫ]*⁴⁷ «բերում եմ», **uegh-ō «տանում եմ»*>լատ. *veh-ō «տանում եմ»,* լիտ. *vežũ*⁴⁸ «տանում եմ»)՝ Դիմային վերջավորություններն են, համապատասխանաբար, **-m, -s, -t**, իսկ **-i**-ն համարվում է եզակի թվի ցուցիչ: Այս առումով ուշագրավ է, որ՝ 1) ներկայի վերջավորությունների **i**-ն չեն պահպանել, հայերենից բացի, նաև հին հունարենը և լատիներենը (հմնտ. հուն. *φέρ-ω «բերում եմ», фέρ-εις «բերում ես», фέρ-ει «բերում է»,* լատ. *veh-ō «տանում եմ», veh-is «տանում ես», veh-it «տանում է»*). հն. սլավ. **i**-ն պահպանվել է եզ. 2-րդ դեմքում. հմնտ. *береша «բերում ես»,* իսկ մյուս դեմքերում այն ենթարկվել է զանազան հնչյունափոխությունների՝ **-ъ** (*берем-ъ «բերում ենք»*), **-е** (*берет-е «բերում եք»*), **-ѣ** (*берев-ѣ «(մենք) երկուսով բերում ենք»*), **-а** (*берет-а «(դուք) երկուսով բերում եք»*). 2) հնդիրանական լեզուները, մասնավորապես՝ սանսկրիտը, բնավոր բայերի ձևին ավելացրել են նաև անբունների **-mi**-ին (կրկնակի վեր-

45 Տե՛ս **A.Meillet**, *Esquisse....*, էջ 117,– **Н. Мартъ**, նույն տեղում, էջ 164; **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. IV, Եր., 1959, էջ 360; **Գ. Ա. Ղափանցյան**, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1961, էջ 279; **Է. Բ. Աղայան**, Գրաբարի քերականություն (հնչյունաբանություն), Եր., 1964, էջ 190; **Г. Б. Джаукян**, Сравнительная грамматика армянского языка, Е., 1982, էջ 164:

46 Հ.-ե. **d**-ն և **t**-ն կիրառական տարբերակներ են և ցեղակից լեզուներում կարող են հանդես գալ որպես համարժեքներ (հմնտ. սնսկ. *damáh*, լատ. *domus*, հուն. *δῶμος*, սլավ. *домъ*, *hj. տուն*,–սնսկ. *dača* «տաար», լիտ. *dėšimt*, հուն. *δέκα*, լատ. *decem*, հն սլավ. *десать*, գոթ. *taihun*, *hj. տասն*,– սնսկ. *padām* «հետք», հուն. *πέδον* «հետք», *πόδα* «ոտքի(ն)», լատ. *pedem*, գոթ. *fofu(s)*, խեթ *pedan* կամ *petan* «տեղ», *hj. հետ-ք* (սեռ. *hj. հետ-ոյ*), հն. իսլ. *fet* «բայլ»): **-t**-ն հանդիպում է հատկապես հայերենում և գերմանական լեզուներում, երբեմն էլ՝ խեթերենում:

47 **-ж** վերջավորությունը, ըստ Ա. Ն. Սավչենկոյի, ծագել է **հ.-ե.** **om-ից* (տե՛ս **А. Н. Савченко**, Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, с. 271):

48 ըստ Ա. Մեյեի՝ **հ.-ե.** **vežũ*՝ ձևից (տե՛ս **А. Мейе**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.–Л., 1938, էջ 241):

49 Հայերենը **հ.-ե.** միակ լեզուն է, որի բնավոր բայը եզ. թ. 1-ին դեմքում ունի բնի **-e/ե/** ձայնավոր՝ բեր-ե-մ. հավանաբար այն առաջացել է դիմաթվային մյուս ձևերի համարաւությունամբ:

ջավորում), որն այդ լեզվում արտահայտվել է երկար *ā*-ի տեսքով եզ., երկ. և հզն. թվերի 1-ին դեմքերում (հմտ. *bhárā-mi*-բերե-մ «բերում եմ»....., *bhárā-vaḥ* «(մենք) երկուսով բերում ենք»....., *bhárā-mah*-բեր-ե-մ-ք «բերում ենք»)։ 3) Հունարենի եզ. 3-րդ դեմքի -ει վերջը ճշտորեն համընկնում է գրք. -է (<եյ)-ին, եթե նկատի ունենանք *i//y* (*ի//յ*) հնարավոր լծորդությունը։

Հետևաբար ներկայի 3-րդ դեմքում վերականգնելով *-տ* (եզ.) և *-ստ* (հզն.) վերջավորությունները՝ Ն. Աղբալյանը, ըստ էության, նկատի է ունենում նախագրաբարյան փուլը։

Պատմահամեմատական հայերենագիտության բարդ խնդիրներից մեկը հայերենում հպաշփական բաղաձայնների (ձ, ծ, ց, ջ, ճ, չ) առկայությունն է, այն դեպքում, երբ այդ հնչյունները չունեն ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան տարածույթի (արեալի) *h.-ե.* լեզուները, բայց ունեն քարթվելական լեզուները, օր.՝ վրացերենը։ Նախորդ դարասկզբի հայերենագիտության մեջ այս հարցը ստացել է երկու միանգամայն տարբեր մեկնաբանություններ։ Դրանցից մեկի համաձայն՝ այդ հնչյունները հայերենում կարող են լինել կովկասյան ենթաշերտի արտահայտություն⁵⁰, իսկ մյուսի համաձայն՝ դրանք հնդեվրոպական հայերենի հնչյութային համակարգի օրինաչափական հնչյունական զարգացումների արդյունք են և հաճախ համընկնում են *h.-ե.* այլ լեզուների, մասնավորապես՝ իրանականների համանման զարգացումներին, «Միայն թէ զարգացման արագութիւնը կրնայ ազգին փոթորկալից պատմութեան յայտանիշ ըլլալ, բայց նաև այս տեսակէտը պէտք չէ չափազանցել»⁵¹։

Ն. Աղբալյանը առաջարկում է հայերենի հպաշփականների, մասնավորապես՝ *g*-ի ծագման նոր տեսություն։ Ըստ այդմ՝ հայերենի *g*-ն «նախավոր», այսինքն՝ սկզբնական *տ*-ի և *ս*-ի միաձուլման արդյունք է։ Դրա վկայություններն են, օրինակ, միջին հայերենի («միջնադարեան ռամկօրէնի») **պացխուն** և **արցունք** բառերը։ Սրանց գրաբարյան ձևերն են **պատասխանի** և **արտասուք**⁵²։ Միջին՝ *-տաս-*, *-տա-* վանկերի *ա* ձայնավորի թուլացումը՝ վերածումը *ը*-ի և ապա անհետացումը *տ* և *ս* հնչյունների մերձենալու և ձուլվելու պատճառ են եղել, որն էլ տվել է *g*։ Ընդ որում, այդ դեպքում ձայնավորի «երանգը» կարևոր չէ, այլ կարևոր է «նրա չքացումը»։ Ըստ **Աղբալյանի՝ կարևոր պայման է, որպեսզի «եզերական» քր և ս հնչյունները պատկանեն միևնույն վանկին**։ Այս մեկնության հիմքում հին հայերենի բառային շեշտի բնույթն է, ըստ որի՝ բազմավանկ բառերի առաջին և վերջին վանկերը շեշտված էին, իսկ միջինները՝ ոչ, որն էլ միջին վանկերի ձայնավոր(ներ)ի հնչյունափոխության պատճառ էր դառնում։ Որովհետև Արցախի բարբառում շեշտված է միջին վանկը,

50 Տե՛ս **A. Meillet**, *Les dialectes indo-européens*, Paris, 1950, էջ 138 (էջ 95-ի ծնթգր.)։
 51 **Հոյգէր Պեղեքսըն**, Հայերեն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 165-169։
 52 Ըստ Յ. Կարստի՝ նշված բառերը հին հայերենից կիլիկյան հայերենին անցել են **պատասխան-ի** > ***պատսխուն** **batsxun* (**patsxun*)>**պացխուն** *baçxun*, **արտասուք**>**արտսունք** **artsunk* >**արցունք** *arçunk*՝ հնարավոր հաջորդականությամբ (տե՛ս **Յոզեֆ Կարստ**, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002, էջ 110)։ Գ-ի դեպքում պահպանում ենք Յ. Կարստի տառադարձումը որպես *hj*. *g*-ի համարժեք, իսկ ընդհանրապես *g*-ն նշանակվում է *c*-ով։

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
 2 (ԺԲ) ԳՐԱԲԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒԽ-ՄԵԿՐԵՄԵՐ, 2014
 ՎԷՆ ԽԱՄԱԽԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒԿ

ուստի այնտեղ այդ ձուլումը տեղի չի ունենում՝ (հմմտ. **պրտանսխան, ըրտանսունք**), ընդհակառակն, հնչյունափոխվում է առաջին վանկի ձայնավորը: Աղբայանի կարծիքով **g**-ն այդ եղանակով է առաջացել հայերենի բոլոր բառերի կազմում, պարզապես ոչ բոլոր բառերի նախնական ձևերն են մեզ հայտնի: Իր միտքը հիմնավորելու համար նա փորձում է հիշյալ սկզբունքի տեսանկյունից ստուգաբանել **hag** բառը: Բաղաձայնների ձուլման տեսության համաձայն՝ այդ բառի նախնական ձևը եղել է ***hastu**: Քանի որ, ըստ սահմանված սկզբունքի, **st** և **u** հնչյունները եղել են լիարժեք վանկի եզրային բաղադրիչները, նշանակում է նրանց միջև երբեմնի եղել է մի ձայնավոր: Այդ ձայնավորը, նրա կարծիքով, եղել է **h**. այդպիսով բառի հնագույն ձևն է ***hastih**: Քանի որ բառավերջը թույլ դիրք է բաղաձայնների համար, ուստի այդ դիրքում այն կարող է վերածվել «պարզ հունչի»՝ ***hastih** (հմմտ. սանսկրիտում բառավերջի **t**-ն վերածվել է շփական **h**-ի⁵³) և ի վերջո անհետանալ: Այդպես ***hastih** բառը ամփոփվել է ***hasth** ձևի: Հին հայերենում **st**-ի վրա շեշտադրումով այն ուղղական էր՝ **hasth**, իսկ **h**-ի վրա շեշտադրումով՝ սեռական՝ **hasth**: ***Zasth** ձևից հին հայերենի բարբառների մի խմբում առաջացել է **hag**, իսկ մեկ այլ խմբում՝ **hast** բառը, որոնք իմաստաբանորեն միմյանցից հեռացած ծագումնաբանական կրկնակներ են: **Zag** և **hast** բառերի գուգահեռ առաջացումը վկայում է հայ ժողովրդի նյութական մշակույթի այն վաղ փուլի մասին, երբ մեր նախնիները **hag** օգտագործում էին **hasth** տեսքով⁵⁴:

Ն. Աղբայանը **hag** բառի ստուգաբանությունը սահմանափակում է նախահայերենյան ձևի վերականգնումով: Կարծում ենք՝ ինչպես այս, այնպես էլ այլ դեպքերում դեր է խաղացել երկու հանգամանք. ա) մինչև Աղբայանի ժամանակները պատմահամեմատական հայերենագիտությունը վստահ դիրքորոշում չունեի այդ բառի ստուգաբանության հարցում⁵⁵, բ) հատկապես նման դեպքերում ինքը հակված չէր բառի ծագումնաբանությունը դուրս բերելու հայոց լեզվի ժամանակագրական սահմաններից:

Յ-ն (հետևաբար՝ առհասարակ հպաշփական բաղաձայնները) հայերենում ոչ «նախավոր», հետևաբար զուտ հայերենյան կազմություն համարելով՝ Ն. Աղբայանն ինքնաբերաբար ընդունում է, որ հայերենի համար «նախավորը» (իմա՝ նախասկզբնականը) հպաշփականների կարգը չտարբերակող հնչույթային համակարգն է, այսինքն՝ հ.-ե. համակարգը, մասնավորապես՝ արևմտյան բարբառախմբի, այսպես կոչված՝ **կենտում** լեզուների համակարգը⁵⁶:

53 Ոմանք այդ հնչյունը նշանակում են **s**-ով. հմմտ. *damah/ damas* «տուն» (տես, օրինակ, **Օ. Семереньи**, Введение в сравнительное языкознание, М., 1980, որից կարելի է նկատարել, որ նրանց տարբերությունը հնչյունական է, այլ ոչ թե հնչույթային):

54 Տե՛ս **Նիկոլ Աղբայան**, Ընտրանի, էջ 279-286:

55 **Zag** բառի ստուգաբանությունների պատմությունը տես **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հատ. III, Ե., 1977, էջ 64-65: Աճառյանն այդ բառը դասում է չստուգաբանվածների մեջ: Համեմատաբար նոր ժամանակներում Գ. Զահուկյանը, այնուամենայնիվ, հակված է **hagh** համար ընդունել հ.-ե. նախաձև՝ ***pek**^h, ***pok**^{ti}? «եփել, թխել» տարբերակներով (տես **Գ. Բ. Զահուկյան**, Հայոց լեզվի պատմություն, էջ 142)՝ այն դիտելով բառասկզբի դիրքում հ.-ե. ***p**-ից. **h** հնչյունական օրենքի գործողության ոլորտում:

56 Արևելյան՝ **սասում** խմբի որոշ լեզուներ ունեցել են առանձին հպաշփականներ. այսպես,

Հաց և **հատ** բառերի հնարավոր ծագումնաբանական առնչության մասին պիտի ասել, որ դրանց իմաստաբանական կապն ակնհայտ է, օրինակ, **ցորենի հատիկ** և **ցորենի հաց** կապակցությունների մեջ: Բացի այդ, ոչ միայն **տ**-ի և **ս**-ի միաձուլումից կարող էր առաջանալ **ց**, այլև **տ**-ն և **ց**-ն կարող էին հերթագայվել միևնույն արմատի բառակազմական տարբերակներում: Ըստ էության՝ այդպիսի հարաբերությունն առկա է նաև **խից** (գրբ. **խցեմ**, որից **խցկեմ/խծկեմ**) «խցանելը, (մի բանի մուտքը) փակելը» և **խիտ** «հոծ, սեղմ, թավ», **հայց** «խնդիր, հարց ու փորձ, քննություն» (որից հայցել, հայցվոր, հայց ներկայացնել և այլն) և **հայտ** «1. պաշտոնական հայտարարություն որևէ իրավունք ստանալու մասին, ... 2. որևէ բանի պահանջի նախնական հայտարարություն, դիմում»⁵⁷ բառերի միջև: Չնայած նշված բառերի կիրառական տարբերությանը՝ ակնհայտ է նրանց իմաստաբանական մերձավորությունը: Դրանք, ըստ ամենայնի, միևնույն նախաձևի տարբեր դրսևորումներն են, որոնցից, Աղբայանի տեսության համաձայն, ավելի ուշ առաջացած ձևն է **խիցը**: Այս դեպքում **տ//ց** հերթագայությունն ունի պատմական բնույթ⁵⁸: **Հայտ** բառը չունեն ինչպես գրաբարի բառարանները, այնպես էլ հայերենի ստուգաբանական բառարանները⁵⁹, որից պիտի ենթադրել, որ այն համեմատաբար ուշ շրջանի կազմություն է: Թեպետ այս դեպքում հնարավոր չէ խոսել ծագումնաբանական ընդհանրության մասին, բայց կարելի է խոսել իմաստաբանական մերձավորության և **ոչ պատմական հերթագայության** մասին: Մեզ համար կարևորն այն է, որ պատմական, թե ոչ պատմական, **ց //տ** հերթագայությունն առկա է, ինչն էլ նրանց՝ որպես լծորդ հնչյունների առնչության վկայություն է:

Ն. Աղբայանի ստուգաբանություններից ուշագրավ են նաև **ծին-ձմեռն**⁶⁰, **պաշտոն**, **պաշտել**⁶¹, **Ոլիմպիոդորոս-Գեորգի, Բանան, Դալիթ-Տարբան-Տարոն**⁶², **խաչ**⁶³ բառերի քննությունները, որոնցում դարձյալ հեղինակը նշված բառերի վերլուծությունն իրականացնում է վերոհիշյալ

ինն հնդկ. ունեցել է յ, յհ, c [č], ch [č'h], հն վավ.՝ Գ [c'], Կ [č'] հպաշփականները:

57 Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., հտ. I, 1976, էջ 812: – **Հայտ** գլխաբառի կապակցական տարբերակների մեջ նշվում է. «**հայտ առնել (հին)**– հայտնի դարձնել, հայտնել» (ընդգծ. մերն է – Վ. Պ.) (տե՛ս նույն տեղում):

58 **Խիտ** և **խից** բառերի ծագումնաբանական ընդհանրության մասին նշել է Ա. Մեյլեն (տե՛ս **A. Meillet**, Les dialectes indo-européens, էջ 57): Հ. Աճառյանը, ըստ էության, այդ տեսակետը չի ընդունել, քանի որ նշված բառերը համարում է չստուգաբանված (տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, Եր., հատ. II, էջ 370–371): Գ. Զահուկյանը, նախ, **խիտ** բառի համար ընդունում է հ.–ե. ***kuei-** («դասավորել, կուտակել, կառուցել»), իսկ **խից** բառի համար՝ *(**s**)**kēi-** – **t/d** ածականներով («կտրել, առանձնացնել») նախաձևերը (տե՛ս Դ. Բ. **Джаукян**, Очерки по истории дописменного периода армянского языка, Е., 1967, էջ 114), ապա հավանական է համարում առաջինի կապը հ.–ե. ***khid-**, *(**s**)**k(h)ai-d-** («խփել, հրել»), իսկ երկրորդի կապը, նշվածից բացի, նաև ***khit-so-** կամ ***khit-s-** նախաձևերի հետ (տե՛ս **Գևորգ Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 332):

59 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., հատ. I, 1979, հտ. II, 1981, – **Ռ. Ս. Ղազարեան**, Գրաբարի բառարան, Եր., հատ. Ա–Բ, 2000: **Հր. Աճառյան**, նույն տեղում, հատ. I–IV, 1971–1979, – **Գևորգ Զահուկյան**, նույն տեղում:

60 Տե՛ս **Նիկոլ Աղբայան**, Ընտրանի, էջ 290–298:

61 Տե՛ս «Միոն», Ա տարի, N 4, ապրիլ 1927, էջ 126–128:

62 Տե՛ս «Միոն», Ա տարի, N 12, դեկտեմբեր 1927, էջ 376–378, – Բ տարի, թիվ 1, 1928, էջ 26–28, – Բ տարի, N 2, 1928, էջ 52–55:

63 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», Խ տարի, 1926, էջ 265–268:

ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2 (ՃԲ) տարի, թիվ 3 (47) հուլիս–սեպտեմբեր, 2014

ՎԷՆ համահայկական հանդես

սկզբունքների կիրառումով: Այս բառերի դեպքում նույնպես նրա նպատակն է հասնել «վաղնջական» ձևերի բացահայտմանը՝ չանցնելով, սակայն, նախապատմական հայերենի սահմանները, այսինքն՝ չհետապնդելով քննությունը հ.-ե. նախաձևի հաստատմանը հասցնելու նպատակ: Բավարարվենք անդրադարձով **խաչի** քննությանը:

Հ. Հյուբշմանը **խաչը** համարել է իրանական փոխառություն՝ վերցնելով անկյունավոր փակագծերի մեջ, ինչը նշանակում է, որ այն չի դասուհավաստի ստուգաբանությունների շարքին⁶⁴:

Նոր հայկազյան բառարանը մեկնել է իբրև «փայտ, ցից»՝ համարժեք նկատելով հուն. *σταυρός* «ցից, մահապարտի ցից, խաչ» բառին⁶⁵:

Հ. Աճառյանը համարել է բնիկ հայերեն բառ՝ ժառանգված հնլ. *khet- «փայտ» արմատից⁶⁶:

Գ. Զահուկյանը, նախ, հնարավոր է համարել **խաչի** ծագումը հ.-ե. *khətyi-? ձևից⁶⁷, ապա՝ *khotio-՝ *khet- ձևերից⁶⁸:

Ըստ Ն. Աղբալյանի՝ **խաչը** «հին բառ է, որ մնացել է ժողովուրդի մեջ իր նախնական նշանակութեամբ: **Խաչ** նշանակում է երկձի կամ երկթև իր, որ նոյն է թէ եռաթև, եթէ հաշուի առնենք նաև բունը»⁶⁹: Նա այդ բառի ծագումը կապում է բարբառային **խէչ**, **խչմար** և սրանց մի տարբերակը հանդիսացող **հաչա** բառերի հետ: Կարծում ենք՝ Ն. Աղբալյանի և Հ. Աճառյանի ստուգաբանությունների միջև հիմնական տարբերությունն այն է, որ Աճառյանը **խաչի** ստուգաբանությունը հանգեցնում է հ.-ե. նախաձևին, իսկ Աղբալյանը բավարարվում է հայերենի հնագույն ձևերի հետ կապի հաստատումով կամ նախահայերենյան նախաձևի վերականգնումով:

Իսկ ինչպես կարող էր հ.-ե. *khet-ը հայերենում դառնալ **խաչ**:՝ Հ.-ե. *kh-ը **x(ju)** է տվել ինչպես իրանական լեզուներում, այնպես էլ հայերենում (հմմտ. սնսկ. *skhalāmi* «սխալվում եմ, սայթաքում եմ», հուն. *σφάλλομαι* «սայթաքում եմ, վրիպում եմ»): Իրանական **x(ju)**-ն նույնպես հայերենում տվել է **ju** (հմմտ. պիլ. *xān*>պրսկ. *xān*>հյ. խան «իջևան», պիլ. *xuāpar*>պրսկ. *xāvar*>հյ.խաւար, պիլ. *xrat*(>պրսկ. *xirad*)>հյ. խրատ ևն): Նկատի ունենալով, որ **ա(a)** և **ե(e)** ձայնավորները կարող էին լինել միևնույն ձայնարձի տարբեր աստիճանները, հնարավոր է ինչպես *kh-e//a->**ju-ե**//**ա**-, այնպես էլ՝ պրսկ. *xā*->**hj**. **խա**- անցումը: Հետևաբար որոշիչ է մնում հ.-ե. *-t//d կամ պրսկ. -j (*xā j*) և հյ. չ (կամ անցումային որևէ հնչյուն, որից կարող էր առաջանալ հյ. չ-ն) համապատասխանության հարցը: Ինչպես հ.-ե. *t//d> հյ. չ, այնպես էլ պրսկ. j> հյ. չ ուղղակի անցման օրինակներ հայտնի չեն: Միջանկյալ օղակների ենթադրումը, բնականաբար, նվազեցնում է հավաստիության աստիճանը:

64 Տե՛ս **Հայերիս Հյուբշման**, Հայերենի քերականություն, Եր., 2003, էջ 158:

65 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. I, Եր., 1979, էջ 922:

66 Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հատ. II, Եր., 1973, էջ 234: **Խաչի** ստուգաբանությունների պատմության հատվածում Հ. Աճառյանը նշում է նաև Ն. Աղբալյանի ստուգաբանությունը:

67 Տե՛ս **Գ. Բ. Զահուկյան**, Հայոց լեզվի պատմություն, էջ 147:

68 Տե՛ս **Գևորգ Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 317:՝ Այս բառահոդվածում տեղ են գտել որոշ վրիպումներ:

69 **Ն. Աղբալեան**, **Խաչ** բառի մասին, «Հանդէս ամսօրեայ», 1926, էջ 267:

Բայցևայնպես, ավելի հավանական ենք համարում, որ **խաչը** իրանական փոխառություն լինի և ըստ ամենայնի՝ փոխառված պահլավական շրջանում, որը նախքան քրիստոնեության մուտքը Հայաստան (301 թ.) արդեն հայերենում ամրագրված բառ էր: Հօգուտ այս ենթադրության կարող են լինել հետևյալ հանգամանքները. 1) ջ(յ)//ձ(ճ)//չ(ճ') անցումները զգալի հավանականություն ունեն որպես հնչարտաբերական հատկանիշներով միմյանց շատ մոտ հնչյուններ (հմմտ. նպրակ. āmāj>hj. մաձ, պրակ. čaman>hj. չաման, պրակ. nāčār>hj. անձար, բայց նաև՝ բրբռ. փխռ. **նաչար** «ձար, ելք չունեցող»)՝⁷⁰, 2) **խաչի հաչա** տարբերակը բարբառային իրողություն է և բնորոշ է այն բարբառներին, որոնցում առկա է գրբ. **խ>**բրբռ. **h** անցում (հմմտ. **խաղող>հավօղ**, **խաղալ>հաղալ/Արարատյան բրբռ.** Երևանի խավօք/, **ախոռ>ահուռ**, **ծուխ>ծօհ /Ազուլիսի բրբռ./**)⁷¹: Այս հատկանիշը բնորոշ է նաև այլ բարբառների ու խոսվածքների (հմմտ. Նոր-Նախիջևան, Ալանբեկ, Տրապիզոն, Խնդաձոր, Ատրախան, Քանաքեռ, Աշտարակ, Էջմիածին, Կողբ, Հաթերք, Շուշի, Բոլնիս- Խաչեն ևն)⁷²: Այդ նույն բարբառներում, սակայն, որքան մեզ հայտնի է, **խաչը**՝ որպես քրիստոնեության կարևոր խորհրդանիշներից մեկի անվանում, **h**-ով, այսինքն՝ **[հաչ]** կամ **[հէչ]** չի արտաբերվում, այլ մնում է **[խաչ]** կամ **[խէչ]**:

Խաչ բառի ստուգաբանություններից Ն. Աղբալյանին հայտնի է եղել Գ. Ֆնտգյանի վարկածը (ՀԱ, 1926, թ. 1-2), որն էլ, թերևս, պատճառ է եղել, որ ինքը նույնպես անդրադառնա այդ հարցին: Կարելի է ենթադրել, որ նրան ծանոթ չեն եղել **խաչի** այլ ստուգաբանություններ, այդ թվում՝ Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի, բայց հենց վերջիններս են այդ ոլորտում բարձրագույն հեղինակությունները՝ առաջինը որպես հայերենի ստուգաբանությունները խիստ գիտական հիմքերի վրա դնող, իսկ երկրորդը՝ որպես Հյուբշմանի և ուրիշների (Մեյե, Պեդերսըն, Բարթոլոմե և այլք) կողմից բացահայտված հայերենի հնչյունական օրենքների խիստ կիրառմամբ արժանահավատ արդյունքներ արձանագրող հայերենագետ-ստուգաբան: Սակայն միանշանակ է, որ **խաչի** աղբալյանական քննությունն ընթացել է ճիշտ ուղղությամբ և ամենից հաջողվածներից է: Պարզապես այն չի հասել իր վախճանակետին՝ նախաձևին կամ փոխատու լեզվի ձևին, ինչն էլ արել են Հյուբշմանը և Աճառյանը: Պիտի նկատի ունենալ, որ այս հարցում չեն համընկնում նաև Հյուբշմանի ու Աճառյանի պատկերացումները:

Այսպիսով, Ն. Աղբալյանի հայերենագիտական նկատառումներն ընդհանուր առմամբ արտացոլում են քննարկվող հարցերի վերաբերյալ իր ժամանակի պատկերացումները: Նրանց համար բնութագրական են ինչպես ժամանակի լեզվաբանական մտքին հատուկ ակադեմիական գիտականությունը, այնպես էլ հարցադրումների և դրանց լուծման ուղիների որոնման ինքնատիպությունը: Համընկնելով երիտքերականական

70 **Նաչար** բառը գործածվում է Գառնիի խոսվածքում, որը, ըստ ամենայնի, պարսկերենից ուղղակի կատարված փոխառություն է, եթե նկատի ունենանք, որ Գառնիի երկրորդ վերաբնակեցումը տեղի է ունեցել 1828-ի ռուս-պարսկական պատերազմից հետո: Պարսկերենի ճ(ձ)-ն հայերենում տվել է թե՛ ձ, թե՛ չ (տե՛ս Գ. Բ. **Ջահուկյան**, նույն տեղում, էջ 556):
71 Տե՛ս Ար. **Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 132):
72 Տե՛ս Գ. Բ. **Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 47-62:

հնդեվրոպաբանության տեղատվության փուլին և բնականորեն հակվելով պատմահամեմատական լեզվաբանության մեջ համոզիչ բացատրություն չստացած հարցերի հանգուցալուծումը փնտրելու տարածաշրջանային լեզուների հետ անմիջական առնչությունների (=ցեղակցության) տիրույթում՝ նրա հայերենագիտական տեսական դատողությունները կրում են գոյություն ունեցող տեսությունների միջև կողմնորոշվելու և դրանց խոցելի կողմերը հնարավորինս հաղթահարելու ձգտումի դրոշմը: Որոշակի լեզվական իրակություններ քննելիս՝ Աղբալյան լեզվաբանի միտքը հնարավորինս ինքնուրույն է ու ինքնատիպ, ինչպես Աղբալյան մտածողի միտքն առհասարակ: Նրա գրչից դուրս եկած հայերենագիտական զանազան քննությունները պատիվ կբերեին ժամանակի ցանկացած նշանավոր հայագետի:

Ուստի կարելի է ափսոսանք հայտնել, որ Նիկոլ Աղբալյանը հնարավորություն չի ունեցել ավելի շատ ժամանակ հատկացնելու հայերենագիտական-լեզվաբանական հարցերի ուսումնասիրությանը, այլապես առանձին երևույթների դիտարկումների փոխարեն մենք կարող էինք ունենալ հայերենին կամ նրա որևէ հիմնահարցի նվիրված ամբողջական ու արժեքավոր ևս մեկ երկասիրություն:

Վարդան Զ. Պետրոսյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց լեզվի և հայ լեզվաբանության պատմության («Մխիթար Սեբաստացու լեզվաբանական հայացքները», 2008), լեզվաբանական նշանագիտության («Հնչական նվազագույն միավորը որպես լեզվաբանական նշան», 2007), լեզվի տեսության և լեզվաբանական ուսմունքների պատմության («Լեզվական և խոսքային մակարդակներ», 2004, «Սոսյուրյան երկու կանխադրույթ», 2010), ընդհանուր և կառուցվածքային հնչույթաբանության («Գերհնչույթը որպես գերհնչույթի խոսքային համարժեք», 2008, «Ձևահնչույթի և ձևահնչույթաբանության լեզվաբանական կարգավիճակը», 2009) և պատմահամեմատական հայերենագիտության («Ստուգաբանական դիտարկումներ», 2013, «Հայերենագիտության երկու հիմնահարց ըստ Հոլգեր Պեդերսոնի», 2013, «Հին հայերենի բացառական հոլովի վերջաւորութիւնների ծագումը», 2014) ոլորտները:

Summary

NIKOL AGHBALYAN AS ARMENOLOGIST
Linguistic reflections of the eminent critic

Vardan Z. Petrosyan

N. Aghbalyan is known to the Armenian community as a famous critic, public and state figure. This article is the first attempt to identify Aghbalyan as

armenologist-linguist. There are two main directions in his linguistic heritage that stand out – questions about theory and the etymology of the Armenian language. If in the first direction he is adjacent the theory of Ghapantsyan about the Armenian language being bilayer, in the matter of language-specific material, i.e. – separate theoretical excitations and lexical analysis, he is very independent and original. Especially the works of his second direction are characterized by special insight of thought and academic scientific content, which is very typical for the diversified written heritage of Aghbalyan thinker. His armenological observations would bring honor to any famous Armenian linguist.

Резюме

НИКОЛ АГБАЛЯН – АРМЕНОВЕД

Лингвистические размышления знаменитого критика

Вардан З. Петросян

Н. Агбальян известен армянской общественности как знаменитый критик, общественный и государственный деятель. Эта статья является первой попыткой выявить Агбальяна, как арменоведа-языковеда. В его языковедческом наследии выделяются два направления – вопросы теории и этимологии армянского языка. Если в первом направлении он примыкает к капанцянской теории двуслойности (дву-природности) армянского языка, то в вопросах конкретного языкового материала, то есть – отдельных теоретических рассуждениях и лексикологических анализах он весьма самостоятелен и оригинален. Особой пронизательностью мысли и академической научностью характеризуются работы второго направления – обстоятельства, которые обычно присущи разнохарактерному письменному наследию Агбальяна-мыслителя. Его лингвистические размышления принесли бы честь любому знаменитому армянскому языковеду.

ՀԵՅՈՒՆԻՍՏԻԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՆԵՑՈՒՄ

Հ (ԺԲ) ԳՐԱԿԱՆՈՒՆԵՑՈՒՄ, 2014

ՎԷՋ ԿԱՆԿԱԿԱՆՈՒՄԻ ԿԱՆՈՒՄ